Վ. Առաքելյանը գտնում է, որ բառի «ինչ խնդիր լինելը պայմանավորվում է հենց այդ գործողությունն արտահայտող խնդրառու բայ-ստորոգյալի քերականական սեռով» (էջ 283)։ Բայական սեռով պայմանավորվում է խնդիրների միայն մի փոքր մասը, մյուս խնդիրները բայը պահանջում է իր իմաստի թելադրանքով։ Որպես դրա լավագույն ապացույց կարելի է վկայակոչել այն խնդիրների օրինակը, որոնք կարող են գրվել տարբեր սեռի պատկանող բայերի հետ։

Հեղինակը երբեմն անզգույշ է իր լեզվի նկատմամբ, որի հետևանքով ստացվում են անհաջող, երբեմն անճշտության հասնող ձևակերպումներ (օրինակ, §§ 397, 445, 582, 697)։ Նա անզգուշություն է ցուցաբերել նաև մի շարք օրինակների ընտրության հարցում՝ օրինաչափի հետ միասին երբեմն ներկայացնելով անօրինաչափը։

Գրախոսվող աշխատությունն իր թերություններով հանդերձ, կարելի է համարել մի ուշագրավ ներդրում ժամանակակից հայերենի քերականագիտության մեջ։

Ս. Դ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԱԼ. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՔԻՄԻԱԿԱՆ ԿՈՄԲԻՆԱՏԻ ՄԱՍԻՆ

Գիտությունների ակադեմիայի հրատարակչությամբ լույս է տեսել Կ. Ս. Կոզմոյանի «Կիրովականի Ալ. Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատի 25 տարին» աշխատանքը։

Գրքի սկզբում շարադրվում է գործարանի հիմնադրման ու շինարարության պատմությունը, ցույց տրվում, թե ինչպիսի մեծ դժվարությունների հաղթահարմամբ, աշխատանքային անօրինակ սխրագործությունների գնով է ստեղծվել կոմբինատը։ Նախքան գործարանի կառուցումը սկսելը մեծ ջանքեր պահանջվեց ցիանամիդի տեխնոլոգիան ուսումնասիրելու համար։ Այդ շնորհակալ աշխատանքը պատվով կատարեցին պրոֆեսորներ՝ Պ. Քալանթարյանը, Ս. Ղամբարյանը, Ղ. Տեր-Ղազարյանը, Լ. Ռուտինյանը և ուրիշներ։ Գործարանի կառուցմանը ամենաակտիվ մասնակցություն ունեցան Սովետական Միության բազմաթիվ քաղաքների արդյունաբերական ձեռնարկությունների բանվորներն ու ինժեներա-տեխնիկական աշխատողները, որոնք կատարում էին քիմշինցիների պատվերները։ Կոմբինատի հարյուրավոր բանվորներ, ինժեներա-տեխնիկական աշխատողներ արտադրական որակավորում ստացան ու մասնագիտացվեցին Սովետական Միության զանազան քաղաքների արդյունաբերական ձեռնարկություններում։

Գրքում ընդգծվում է այն բացառիկ հոգատարությունն ու ուշադրությունը, որ ցուցաբերել է Կոմունիստական պարտիայի և Սովետական պետության ականավոր գործիչ Ս. Օրջոնիկիձեն գործարանի կառուցման ու հետագա զարգացման գործում։

Գրախոսվող գրքում ցույց է տրվում, թե ինչպես տարեց տարի ավելանում է Կիրովականի քիմիական գործարանի արտադրական կարողությունը, աճում են մարդիկ՝ արտադրության էնտուզիաստները ու նորարարները, ինժեներա-տեխնիկական աշխատողները։ Գրքի հեղինակը ցույց է տալիս այն վճռական դերը, որ խաղացել են պարտիական, պրոֆմիութենական և կոմերիտական կազմակերպությունները ռեսպուբլիկայի սոցիալիստական ինդուստրիայի կարևորագույն օջախներից մեկի կառուցման գործում։

Գրքի «Գործարանի կոլեկտիվը Հայրենական Մեծ պատերազմի տարիներին» գլխում պատմվում է Կիրովականի Ալ. Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատի բանվորների աշխատանքային անօրինակ խանդավառության մասին։ Կոմբինատի կարրիդագործները պատերազմի ամբողջ ընթացքում առանց ընդմիջման կարբիդ-կալցիում էին տալիս ռազմական կարիքների համար, աշխատելով «ամեն ինչ ռազմաճակատի, ամեն ինչ հաղթանակի համար» նշանաբանով։

«Արտադրական նոր ցեխերի շինարարությունն ու գործարանի վերածումը կոմբինատի», «Ազոտային խմբի ցեխերի գործարկումն ու արտադրանքի նոր տեսակների թողարկումը» գլուխներում բազմակողմանիորեն լուսաբանվում է Կիրովականի քիմիագործների հաջողությունները հետպատերազմյան ժամանակաշրջանում։ Քիմիագործները պատվով են կատարում պարտիայի և կառավարության դիրեկտիվները քիմիական արդյունաբերությունը ուժեղ տեմպերով զարգացնելու վերաբերյալ։ Ռացիոնալիզատորների ու գյուտարարների կողմից ներքին ռեզերվները ժամանակին հայտնաբերելու և օգտագործելու շնորհիվ կոմբինատը 1953 թ. ծախսերի նորմայի իջեցման հաշվին տնտեսեց կես միլիոն, իսկ 1955 թ.՝ մեկ ու կես միլիոն ռուբլի։ Կոմբինատի գոյության 25 տարում մոտ 800 հոգի մտցրել են ռացիոնալիզատորական

5674 առաջարկ, որից արտադրության մեջ ներդրվել է 2862-ը և դրանցից ստացվել է 16.108 հազար ռուբլու օգուտ։

Կոմբինատի արտադրանքը ապահովում է ոչ միայն մեր Միութենական ռեսպուբլիկաների պահանջը, այլև նրա մի մասն արտահանվում է ժողովրդա-դեմոկրատական երկրներ։ Կոմբինատի արտադրած թթվածնով ապահովվում է ողջ Անդրկովկասը։ Նա միակ ձեռնարկությունն է, որ ամոնիակային սիլիտրա է մատակարարում Հայաստանին ու Ադրբեջանին։

Գրախոսվող գրքում պատմվում է տեխնիկական ուսուցման ասպարեզում կոմբինատի կոլեկտիվի կուտակած ուսանելի փորձի մասին։ Միայն վերջին 5 տարում տեխնիկական ուսուցման խմբակներում սովորել ու իրենց արտադրական որակավորումը բարձրացրել են ավելի քան 4000 բանվորներ։ Կիրովականի քիմիական կոմբինատը ոչ միայն պատրաստել է հազարավոր կադրեր քիմիական արդյունաբերության համար, այլև աճեցրել է մարդիկ, որոնք անձնվեր աշխատանք են կատարում ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերում, սովետական և պարտիական ապարատում։ Գրքում պատմվում է այն մեծ ու անշահախնդիր օգնության մասին, որ ցույց են տալիս կոմբինատի ինժեներա-տեխնիկական աշխատողները ժողովրդա-դեմոկրատական երկրներից եկած մասնագետների արտադրական-տեխնիկական ուսուցումը կազմակերպելու ասպարեզում։

Չինաստանում քիմիական արդյունաբերության զարգացման ասպարեզում Կիրովականի քիմիական կոմբինատի խաղացած դերի մասին խոսել է ՉԺՌ արտակարգ և լիազոր դեսպան Լյու Սյաոն. «Ձեր կոմբինատը — գրում է նա,— մեր երկրում սոցիալիստական հասարակարգ կառուցելու գործում մեծ օգնություն և աջակցություն ցույց տվեց։ Ձեր աշխատանքի առաջավոր փորձն ու ինտերնացիոնալիստական ոգին հրաշալի օրինակ են հանդիսանում մեր ժողովրդի համար» (էջ 163)։

Գրքի «Քիմիական կոմբինատը 1959—1965 թթ.» գլխում հեղինակը խոսում է առաջիկայում կոմբինատի արտադրական կարողության հետագա ընդլայնման միջոցառումների մասին, ինչպես հայտնի է, ՍՍՌՄ ժողտնտեսության զարգացման 1959—1965 թթ. կոնտրոլ թվերին համապատասխան առաջիկա յոթնամյակում լուրջ զարգացում է ապրելու քիմիական արդյունաբերությունը, ծանր ինդուստրիայի այդ կարևորագույն ճյուղը, որը հնարավորություն է ընձեռում առավել արդյունավետ օգտագործել երկրի բնական հարստությունները և հանդիսանում է ողջ ժողովրդական տնտեսության հետագա տեխնիկական առաջադիմության անհրաժեշտ պայմանը։ Յոթնամյակում լայն զարգացում կապրի նաև ռեսպուբլիկայի քիմիական արդյունաբերությունը։ Կիրովականի քիմիական կոմբինատում ամիակի և ազոտային պարարտանյութերի արտադրության հետագա ընդլայնմանը մեծ չափով կնպաստի Եղրայրական Ադրբեջանից ստացվող բնական գազը, որը լայն հնարավորություններ կտա օրգանական սինթեզի մի շարք կարևորագույն արտադրությունները հումքի նոր բազայի հիման վրա արմատապես վերակառուցելու և արագորեն զարգացնելու համար։

Գրքում հատուկ գլուխ է նվիրված կոմբինատի բանվոր-ծառայողների նյութական բարեկեցության, կուլտուրական մակարդակի անշեղ բարձրացմանն ու ավանի բարգավաճմանը։ Կոմունիստական պարտիան ու Սովետական կառավարությունը բոլոր միջոցները ձեռք են առնում, որպեսզի քիմիագործները ապրեն ունևոր ու կուլտուրական կյանքով։

Յոթնամյակում լայն հեռանկարներ են բացվում քիմիական կոմբինատի հետագա զարգացման համար։ Այնտեղ արդեն այժմ կառուցվում են և մոտակա տարիներին շահագործման կհանձնվեն մելամինի և սինթետիկ կաուչուկի գործարանները, որոնք ունեն բացառիկ կարևոր նշանակություն բարձրորակ ներկերի, էլեկտրամեկուսիչ նյութերի, պլաստմասսաների համար անհրաժեշտ խեժեր ստանալու, ժամացույցի քարերի, ոսկերչական առարկաների թանկարժեք քարերի արտադրության զարգացման համար։ Ժողտնտխորհրդը արդեն միջոցառումներ է մշակել, որպեսզի մոտիկ ապագայում Կիրովականում ամիակը նույնպես ստացվի բնական գազից, այն հաշվով, որ այդ նյանյութի արտադրությունն ավելացվի ավելի քան երկու անգամ։ Բնական գազի արդյունաբերական վերամշակումը և դրանից ամիակի ու ացետիլենի ստացումը իր հերթին հնարավորություն կտա կազմակերպել մի շարք նոր արժեքավոր նյութերի՝ ակրիլիտային մանրաթելի-նիտրոնի, միզանյութի և տուֆատ-ամոնիումի արտադրությունը։

Առաջիկա յոթնամյակում ռեսպուբլիկայում քիմիական արտադրանքի թողարկումը ավելացնալու է 3,3 անգամ։ Լուրջ վերակառուցում է ապրելու նաև Կիրովականի քիմկոմբինատը, որի կոլեկտիվը ծրագրում է մոտիկ ապագայում նիտրիլակրիլային թթվուտի բազայի վրա կազմակերպել արհեստական թելի արտադրությունը։ Մեր ռեսպուբլիկան առաջիկայում դառնալու է

քիմիայի ռեսպուբլիկա,— ինչպես ասել է ընկ. Ս. Թովմասյանը պարտիայի XXI համագումարում։ Այս ամենը պարտավորեցնում էին հեղինակին գրքում նշանակալից տեղ հատկացնել Կիրովականի քիմիական կոմբինատի հետագա զարգացմանը, սակայն այդ մենք չենք նկատում և գա գրախոսվող գրքի գլխավոր թերությունն է։ Հեղինակը շատ մակերեսորեն է լուսաբանում այդ հարցը։ Գիրքը զգալի չափով կչահեր, եթե նրա հեղինակը ավելի հանգամանորեն լուսաբաներ քիմիական արտադրության առաջավորների, նորարարների, ռացիոնալիզատորների աշխատանքի փորձը, որպեսզի այն ուսանելի օրինակ հանդիսանար ռեսպուբլիկայի քիմիագործների համար։

Կ. Ս. Կոզմոյանի «Կիրովականի Ալ. Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատի 25 տարին» գրքում տրված է ռեսպուբլիկայի ծանր ինդուստրիայի կարևորագույն օբյեկտներից մեկի պատմությունը նրա կառուցման սկզբից մինչև մեր օրերը, բազմակողմանիորեն վեր է հանված կոմբինատի հիանալի ինտերնացիոնալիստական կոլեկտիվի արդյունավետ աշխատանքը արտադրության տեխնիկայի կատարելագործման, աշխատանքի արտադրողականության բարձրացման ասպարեզում։

Ցանկալի է, որ այդպիսի մոնոգրաֆիկ աշխատություններ գրվեն նաև ռեսպուբլիկայի ծանր արդյունաբերության մյուս կարևոր օբյեկտների մասին։

Ա. Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ